ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ
„ԲԵՌԼԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ„
Փ.Բ.Ը.

ПОЛИКЛИНИКА „БЕРЛИН„
З.А.О
ШИРАКСКОГО РЕГИОНА

"24 " Դեկտեմբեր__ 2024 թ

N Ե-15/60

ք.Գյումրի հաղթանակի 25
հեռ. +374 312 55133

«ԲԵՌԼԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ

ՈՐՈՇՈՒՄ

Վագա ֆարմ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելուն իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ԲՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/2

Մասնակից՝ «Վագա ֆարմ» ՍՊԸ

/ՀՎՀՀ 01536316, հասցե ՀՀ, Երևան, Զաքյան 10 հեռ:01073-99-40 /

«ԲԵՌԼԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ-ի կարիքների համար «Դեղորայք և պատվաստանյութեր»-ի ձեռքբերման նպատակով 21.11.2024թ. հայտարարվել է ԲՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել «Վագա ֆարմ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը 16.12.2024թ.-ին կայացրած նիստում արձանագրել է, որ «Վագա ֆարմ» ՍՊԸ-ի հայտը ամբողջությամբ չի համապատասխանում ԲՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին՝ բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը և 50-րդ չափաբաժնով դեղորայքի հավաստագիրը: Մասնակցին ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան «Վագա ֆարմ» ՍՊԸ-ն չի ներկայացրել շտկված փաստաթղթերը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2027թ. N526-Ն որոշման 42-րդ կետը հանձնաժողովը մերժել է «Վագա ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստացի տվյալներին պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն չներկայացնելով հրավերով սահմանված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման ընթացակարգին «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ Դ.ԴԱՎՈՅԱՆ